ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.07.2013թ.
204-ի 4

“Փարքինգ Սիթի Սերվիս” ՓԲԸ-ի տնօրեն
պարոն Վազգեն Հարությունյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝

- խնդրում ենք տրամադրել Երեւան քաղաքի վճարովի ավտոկայանատեղիներում տեղադրված յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար հիմք հանդիսացած իրավական ակտի (օրենք, որոշում, կարգադրություն եւ այլն) պատճենը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլ մարմինների՝ տեղեկություն տնօրինող են համարվում նաեւ … տրանսպորտի … ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները, ինչպես նաեւ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները (հանրային նշանակության կազմակերպությունները): Ուստի, “Փարքինգ Սիթի Սերվիս” ՓԲԸ-ն նույնպես “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի իմաստով տեղեկություն տնօրինող մարմին է եւ պարտավոր է պատասխանել տեղեկություն ստանալու հարցումներին ՏԱ մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց ***հետո 5-օրյա ժամկետում:*** Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան